REPUBLIC OF ARMENIA
ARAGACOTN PROVINCE
<<ASHTARAKI BJSHKAKAN
KENTRON>> CJSC

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МАРЗ АРАГАЦОТН ЗАО
<<АШТАРАКИ БЖШКАКАН
КЕНТРОН>>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
<<ԱՇՏԱՐԱԿԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>ՓԲԸ

/0232/ 3-19-49
FAX: /0232/ 3-19-49

Հայաստանի Հանրապետության ֆինանսների

նախարար պարոն Վ. Հովհաննիսյանին

Հարգելի պարոն Հովհաննիսյան,

Աշտարակի ԲԿ ՓԲԸ և Ագաստ ՍՊԸ միջև 08.01.2024թ ԱՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/04-Ա ծածկագրով գնման պայմանագրի համաձայն՝ վերջինս պարտավոր էր մինչև 25.01.2024թ մատակարարել որոշակի քանակությամբ դեղորայք: Բազմիցս տրվել է պատվեր բանավոր կարգով, սակայն դեղորայք չի մատակարարվել: 22.01.2024թ գրավոր կարգով տրվել է համապատասխան պատվեր, սակայն 29.01.2024թ ապրանքը մատակարարվել է մասամբ՝ քիչ քանակի, որը առաջացնում է խնդիրներ բնակչությանը դեղորայքով ապահովելու համար:

Հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7 կետը , 30.01.2024թ –ից միակողմանի մասնակի լուծել վերոնշյալ պայմանագիրը:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և /կամ/ պայմանագրով սահմանված չի վճարել հայտի, պայմանագրի և /կամ / որակավորման ապահովման գումարները:

Խնդրում եմ Ձեր հանձնարարականը համապատասխան ստորաբաժանմանը՝ <<Ագաստ>> ՍՊԸ–ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ստորև ներկայացվում է ՀՀ կառավարության 19.05.2022թ թիվ 727-Ն որոշմամբ սահմանված ձևաչափին համապատասխան տեղեկատվությունը.

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	Գործունեության հասցեն	Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			Ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			Խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	Խախտել է պայմանագրով նապատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	Որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
Ագաստ ՍՊԸ	00435781	Ք. Երևան, Տ.Պետրոսյան 31/1		+		07.02.2024թ ԱՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/04-Ա

ԱՇՏԱՐԱԿԻ ԲԿ ՏՆՕՐԵՆ՝ Ա.Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Digitally signed by HOVHANNISYAN ARGISHTI 1110770332
Дата: 2024.02.22 10:48:49 AMT